

**ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՀԱՐԿԱՅԻՆ ԵՎ ՄԱՔՍԱՅԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

ՈՐՈՇՈՒՄ N 36/10

ք.Երևան

26 հունիսի 2018թ.

Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի հարկային և մաքսային մարմինների բողոքարկման հանձնաժողովը (այսուհետ նաև՝ Հանձնաժողով), քննության առնելով ավելացված արեժքի հարկի գումարը վերադարձնելու վերաբերյալ «ԱՎԻԱ ԱԱՍ» ՍՊԸ դիմում-բողոքը՝

ՊԱՐՁԵՑ

1. Բողոքարկման առարկան, դիմում-բողոքով բերված փաստարկները և ներկայացված պահանջները

«ԱՎԻԱ ԱԱՍ» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) իր դիմումի համաձայն 2015թ. հունվարի 1-ից դադարեցրել է գործունեությունը: Տվյալ ժամանակահատվածում Ընկերության հաշվին եղել է 150.000 դրամ, որպես ավելացված արժեքի հարկի ավել վճարված գումար:

2018թ. Ընկերությունը դիմել է հարկային տեսչություն՝ ԱԱՀ-ի վճարված գումարի ավելցուկի վերադարձման խնդրանքով: Հարկային տեսչությունում տեղեկացրել են այն մասին, որ 2017թ. դեկտեմբերի 30-ին Ընկերությունը լուծարվել է: Քանի որ Ընկերությունը նախապես տեղեկացված չի եղել լուծարման մասին, հետևաբար չի դիմել վերը նշված գումարը ետ ստանալու խնդրանքով:

Ելնելով վերոգրյալից՝ Ընկերությունը խնդրում է վերադարձնել ավել վճարված գումարը:

2. Դիմում-բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

«ԱՎԻԱ-ԱԱՍ» ՍՊԸ-ի ԱԱՀ-ի անձնական հաշվի քարտում 01.05.2002թ. դրությամբ առկա է եղել 150.200 դրամ:

Ընկերության գործունեությունը ժամանակավոր դադարեցվել է 01.01.2009թ-ից: «Հարկային հաշվետվություններ չներկայացրած կազմակերպությունները լուծարելու և անհատ ձեռնարկատերերին պետական հաշվառումից հանելու մասին» 16.12.2016թ. ՀՕ-260-Ն օրենքի շրջանակներում 30.12.2017թ. Ընկերությունը համարվել է լուծարված:

13.12.2017թ. Ընկերության կողմից թղթային տարբերակով հարկային մարմին է ներկայացվել ԱԱՀ-ի գերավճարի վերադարձի Ձև NՀՎ1 դիմում: Մերժման հիմքերի բացակայելու արդյունքում 11.01.2018թ. կազմվել է վերադարձ կատարելու մասին Ձև NՀՎ2 եզրակացությունը:

13.03.2018թ. Ընկերության կողմից ՀՎՍՎ թիվ 1 բաժին է ներկայացվել դիմում՝ Ընկերությանը լուծարված հարկ վճարողների ցանկից հանելու վերաբերյալ: Համաձայն ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 14.03.2018թ. N173-Ա հրամանի ոչ իրավաչափ է ճանաչվել «ԱՎԻԱ-ԱԱՍ» սահմանափակ պատասխանատվության ընկերությանը լուծարման ենթակա հարկ վճարողների ցանկում ներառելու գործողությունը:

3. Հիմնավորումներ, պատճառաբանություններ և եզրահանգումներ

Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 456-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Օրենսգիրքն ուժի մեջ մտնելու օրվա դրությամբ առկա գերավճարները հաշվառվում են մինչև Օրենսգիրքն ուժի մեջ մտնելը գործող կարգով՝ գանձապետարանի կողմից վարվող պետական բյուջեի միջոցների առանձին ենթահաշվում: Նույն մասում նշված գերավճարների վերադարձն իրականացվում է Օրենսգիրքն ուժի մեջ մտնելուց հետո գործող կարգով:

Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 456-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ 2010 թվականի հունվարի 1-ից մինչև Օրենսգիրքն ուժի մեջ մտնելու օրը հարկային մարմին որևէ հարկային հաշվարկ և գործունեությունը դադարեցնելու մասին հայտարարություն չներկայացրած հարկ վճարողների կողմից մինչև 2010 թվականի հունվարի 1-ն ընկած հաշվետու ժամանակաշրջանների համար վճարված գումարները հանվում են հաշվառումից, եթե այդ հաշվետու ժամանակաշրջանների համար հարկային հաշվարկներ չեն ներկայացվել:

ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 21.12.2017թ. «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգիրքն ուժի մեջ մտնելու օրվա դրությամբ առկա գերավճարների վերադարձման կարգը հաստատելու մասին» N432-Ա հրամանով հաստատված կարգի 3-րդ կետի համաձայն՝ նույն կարգով վերադարձվում են 01.01.2018թ. դրությամբ ամփոփված՝ մինչև Օրենսգիրքն ուժի մեջ մտնելու օրվա դրությամբ առկա գերավճարների մնացորդները:

Գրությամբ նկարագրված դեպքում «ԱՎԻԱ ԱԱՍ» ՍՊԸ կողմից ներկայացված գերավճարի և գերավճարից տարբերվող գումարների հաշվին հարկային պարտավորությունների դիմաց հաշվանցում և (կամ) վերադարձ կատարելու մասին դիմումի բավարարման գործընթացը մինչև 2018 թվականի հունվարի 1-ը չի ավարտվել, սակայն ուսումնասիրության արդյունքներով կազմվել է եզրակացություն: Հետևաբար, հիմք ընդունելով արդեն կատարված ուսումնասիրությունը, ինչպես նաև այն, որ հարկ վճարողը դիմում ներկայացրել է մինչև Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքով սահմանված կարգով՝ մինչև 2010 թվականի հունվարի 1-ն ընկած հաշվետու ժամանակաշրջանների համար վճարված գումարները հաշվառումից հանելու ժամկետը, հետևաբար Հանձնաժողովը գտնում է, որ «ԱՎԻԱ ԱԱՍ» ՍՊԸ գերավճարը ենթակա է վերադարձման, որի համար անհրաժեշտ է կազմել ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 27.07.2017թ. N246-Ն հրամանով հաստատված եզրակացություն՝ նշված գումարները միասնական հաշվին մուտքագրելու համար:

4. Եզրափակիչ մաս

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 20-րդ բաժնով, «Մաքսային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածով, Հանձնաժողովը

ՈՐՈՇՈՒՄ Է՝

Ավելացված արեժքի հարկի գումարը վերադարձնելու վերաբերյալ «ԱՎԻԱ ԱԱՍ» ՍՊԸ դիմում-բողոքը բավարարել:

Հանձնաժողովի նախագահ



Ռ.ՄԱՇԱԴՅԱՆ